# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

«5» մայիսի 2025 թվականի N: 179 -Ա քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-Ի № 130-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարի 2025 թվականի ապրիլի 18-ի № 49/14/103548-25 գրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2024 թվականի ապրիլի 5-ի «Քաղաքացիական պաշտպանության Շիրակի մարզային ծառայություններ ստեղծելու, ծառայությունների պետեր նշանակելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2010 թվականի ապրիլի 6-ի № 59-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» № 130-Ա որոշման հավելվածի 8-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ «8. **Հասարակական կարգի պահպանման ծառայություն**-ծառայության պետ՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Կումայրիի բաժնի պետ»:

Դ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է